

(50-ական թվականին), ուսումնասիրեց թէ և մի փոքր աշխատանքով մեր նախնիքները ինչ են արել (sic. !): Մինչդեռ Լյուին ոչ մեծ և ոչ փոքր «աշխատանքով» չէ ուսումնասիրած Հայոց Նախա-լատինները, իսկ 1850 թվին նրա հրատարակած գործը՝ «Լյուին հայոց Հայաստանի հնչականութիւնը»-ն, որ հիմնադրար դարձաւ ազգային վիպական գրականութեան և իր ժամանակին առաջացրեց մի շարք փոխադրութիւններ և հետագոյն թիւներն ալ և ալ լեզուներով:

Գր. Նալբանդյան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Հուշի, օգոստոսի 22-ին
Հատերը դիմում են ինձ հարցնելով, թէ ինչ է պատճառը, որ ես թողի Վարաբաղի հայոց թեմական դպրանոցի տեսչի պաշտօնը:

Այս հարցին լիովին զոհացումն տալու համար, հարկաւոր էր մի ամիսի յօդուածում ներկայացնել հասարակութեանը մեր թեմական դպրանոցի իսկական պատկերը և այդ պատկերը տեսնելուց յետո՛ւ հետաքրքրւոյ՞լ կարող էր դատել՝ արժէ՞ր ինձ այժման պայմաններում շարունակել իմ պաշտօնս, թէ ոչ: Մի ուրիշ՝ աւելի յարմար ժամանակի թողնելով այդ գործը, ես իմ հրաժարականի շարժառիթները մասին գէթ մօտաւոր դատարար տալու համար, պարտք եմ համարում յայտնել առ այժմ հետեւեալը: Ներկայ ամիս յունիսի 7-ին, երբ տեղի ունեցաւ դպրանոցի տարեկան հանդէսը, ես իմ միամտեղ հաշտութեան վերջում, անկարելիով դպրանոցի մի քանի նշանաւոր թերութիւնների վրա, ի միջի այլոց ասեցի, որ ես այս տարի պիտի առաջարկեմ հոգաբարձութեանը մի քանի պայմաններ:—Կընդունեն այդ պայմանները, ես էլ կը մնամ, չը նայած ընտանեկան արեւընթերիս, չեն ընդունի—ես էլ կը հրաժարվիմ, թողնելով ասպարէզը ինձանից աւելի ընդունակներին. ես գործեցի, որքան ներքին իմ անձնական թիւղ ոյծերը և արտաքին անբարեկամ-տեհ հանգամանքները թող զայ ինձանից ընդու-նակը, ես պատրաստ եմ տեղի տալու, միայն թէ ընդհանուր դրո՞ծը չա՛նկնի—այս խօսքերով ես վերջացրի իմ հաշիւը: Թուիսի 13-ին սրբազան առաջնորդի միջոցով ես դիմեցի հոգաբարձութեանը մի գրութեամբ, որտեղ մէջ էի բերել և որոշած պայմաններս: 1) Իրաւունք տալ տեսչին կադ-մէր նոր ուսուցչական խումբ, յատկացնելով այդ խումբին ուսճիի ոչ պակաս քան տասն երկու հա-զար ռուբլի, 2) աւելի ճիշդ որոշել խորհրդակցի զործունէութեան շրջանը, կայացնելով տեսչի և սրա միջոցով՝ ուսուցիչներին իւրաքանչիւրի հետ գրաւոր պայմաններ, 3) ուսումնարանի անտեսա-կան գործը աւելի արդիւնատու դարձու համար լրացնել հոգաբարձուների թիւը:

Այս գրութեան մէջ ես կատարեցի իմ պէտք յայտնել էի, որ ես ստիպւած կը լինեմ հը-րաժարվել, եթէ հոգաբարձութեանը չընդունէ վե-րոյիշեալ պայմանները: Հոգաբարձութիւնը այնքան քաղաքավարի գտնվեց, որ մինչև այսօր ինձ պաշ-տօնական պատասխան չը տուեց: Նորեւր լսեցի, որ իմ տեղս հրաւիրված է Ներսիսեան դպրանոցի ուսուցիչ Կ. Լևոն Սարգսեան: Ես առաջինս եմ չնոր-հաւորում նրա դադարաւոր և նոր պաշտօնը: Յանկա-նում եմ նրան՝ գործել աւելի բարեպաշտ՝ պայ-մաններում և աւելի երկար ու արդիւնաւէտ: Առ այժմ այսքան:

Եղիշ Մադաթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Մօսկվա, 23 օգոստոսի
Հատերը դիմում են ինձ հարցնելով, թէ երբ լոյս կը տեսնի այն ժողովածուն, որ հրատարա-կում է Մօսկվայի հայ ուսանողներին և ուսա-նողների մի խումբ:

Չը նայելով հրատարակչներին չեմ ցանկու-թեանը ճշտութեամբ պատասխանել այդ հարցե-րին, նրանք այդ անել չեն կարող, որովհետեւ ժո-ղովածուն տպւում է պ. Մ. Բարխուդարյանի սպարանում, ուր զանազան գրքեր շարվում են հերթով ու անտարակնորէ: Ինչից է այդ առա-ջանում, նրանք, որ տպելու յանձնված գրքերը սովորականից շատ են, թէ գրաշարները՝ սովորա-կանից քիչ—այդ այնպիսի մի հարց է, որ զըմ-ուար թէ հետաքրքրի ժողովածուի բաժանորդնե-րին:

Պէտք է յուսալ, որ ժողովածուն լոյս կը տեսնի սեպտեմբերի վերջին: Ուստի հրատարակչները

խնդրում են այն անձինքներին, որոնց մօտ կան ժողովածուի բաժանորդարժեքներ, ուղարկել այդ բաժանորդարժեքները ոչ ոչ քան սեպտեմբերի 10-ը: Այն բաժանորդարժեքները, որոնք պօստ գցված կը լինեն սեպտեմբերի 10-ից ուշ,—հաշի-վեն աւանդել, այսինքն 60 կօպէկով ժողովածուն կը ստանան միայն այն բաժանորդները, որոնք բաժանորդ գրվելը յայտնի կը լինի հրատարակիչ-ներին մինչև ժողովածուի լոյս տեսնելը:

Հրատարակելուց յետոյ ժողովածուի գինը ան-պատճառ կաւելացիլով մինչև 1 ռուբլի: Ի դէպ, ոմանք ինձ գրում են, որ խօշորան ար-գելք է լինում բաժանորդներ գտնել, որովհետեւ ստորագրութիւններ են բացված յօդուած ձրի թէ-յաների, ճաշարանների, խօշորային գոհ գնա-ցածների ընտանիքների և այլն: Ինչպէս երևում է, շատերը կարծում են, թէ բաժանորդ գրվելով լատութիւն են անում հրատարակչներին: Հրա-տարակիչները յատուկ խնդրում են բաժանորդ գրա-նողներին չը դիմել այդպիսի պարտքերին:

Բաժանորդարժեքները և փողերը պէտք է ու-ղարկել առաջին հասցեով՝ Москва, Тверская улица, Номера Фальц-Фейн, № 201, студенту Тиграну Иоансянц.

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՌԵՐ

Խնդրում ենք այն պարտններին, որոնք ուղի-րութիւն ունեն ուղղել իրանց ստացվող նամակ-ներն ու հեռագրերը «Մշակի» խմբագրութեան անունով՝ աղաւթ մեղ իրանց նամակներից ու հեռագրերներից: «Մշակի» խմբագրութիւնը ան-դադար անհանգիստ անելու փոխանակ՝ պարտն-ները կարող են պատուիրել, որ իրանց հեռագրե-րն ու նամակները ուղարկվեն Ռիբլի, ուղղա-կի պօստատուն կամ հեռագրատուն, до востре-бования հասցէով:

Թէ՛նրանից ստացված մասնաւոր նամակներից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները. «Խօշ-րան աճադին ջարդ է անում այստեղ. օրական 500 մարդ է մեռնում: Այլ եւ դերձիմանափոխները մէկ մէկ չեն փորում գերեզմանները, այլ մի մեծ խրամ են փորում, որի մէջ լցնում են 10-ից մինչև 15 դիակ միանգամից: Խօշրան արդէն տարածվել է և ամբարանոցները, որտեղ ապա-տանվել են քաղաքացիք: Մի քանի շաբաթվա ընթացքում, Թէ՛նրանում իր շրջակայքում՝ մեռել են 50,000 հոգի: Ոչ մի բժշկական օգնութիւն գրեթէ չը կայ: Ով որ խօշորայից չէ մեռնում՝ վտանգի մէջ է լինում Պարսկաստանի մայրաքա-ղաքում սովից մեռել. տակեղներին բոլոր խա-նութիւնները փակ են, կենսական միջերը, հաց ամ-նին չէ ճարվում»:

Պարսկաստանից ստացված մասնաւոր նամակ-ներից քաղում ենք հետեւեալ. «Թաւրիզում խօ-շրան մեղմացել է: այժմ օրական միայն 100 մարդ է մեռնում: Գաղվիւում խօշրան բաւական հոնձ է գտել, չէ շտապում, ծանր ու բարակ նստած է ու կամաց կամաց հոնձ է իր հոնձը: Ռաշտում գեւ շարունակվում է, թէ և պակասել է. բայց որովհետեւ տարածվել չը եղանակներ է անում՝ երկիւղ կայ որ ցաւը սաստկանայ: Էնդե-լում խօշրան դադարել է, գլխաւորապէս այն պատճառով, որ ընտանիքներ մի մասը մեռել է, իսկ միւսը փակել է»:

ՆՈՐ-ԱՍՏՈՋԵՏԻՑ ստացանք հետեւեալ հեռագրե-րը, որ տեղական հայ երկրասարդութեան կող-մից ստորագրել է պ. Տէր-Մկրտչեան: «Հայոց մուսան որբացել է. հայ երկրասարդութիւնը խոր կերպով վշտացած է մեծ բանաստեղծի կորա-տեան պատճառով»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեղ գրում են. «Խօշրան երեսուն միւրջնում է, իսկ Բարեգործական ընկերութեան մեր տեղական ճիւղի անդամները մինչև այժմ դեռ ոչինչ չեն արել. նրանք Եպիդէմիայի ամբողջ ընթացքում մոտացել էին իրանց պարտաւորութիւ-նը: Գուցէ սպասում են, որ մի ուրիշ անգամ խօշրա զայ... Երբ այստեղի հայ երկրասարդ-ները առաջին անգամ սկսեցին գումար հանգա-նակել ձրի թէյատուն բաց անելու համար, նրանք դիմեցին և Բարեգործական ընկերութեան ճիւղի անդամներին, խնդրելով որ նվիրապէս աջակցեն

գործին. բայց ընկերութեան անդամները մերժե-ցին որ և է օգնութիւն տալ»:

ՇՈՒՇՈՒՑ մեղ գրում են. «Օգոստոսի 23-ին խանդավորեանցի թատրոնական դահլիճում կայա-ցաւ Հուշու հայոց օրիորդաց երկգահան դպրոցի տարեկան հանդէսը: Հանդէսի այսքան ուշ կայա-նալով պատճառը խօշրան էր: Գալոցի 1891/92 ուսումնական տարվա ուսումնական հաշիւը պարզ երևաց, որ առաջադիմութիւնը այդ դպրո-ցում անկերտ կերպով կարգում է. ուրիշ կերպ էլ չէ կարող լինել, քանի որ, բացի ուրիշ պատճառ-ներից, ուսուցիչներն ունեցել են 26—28 դաս շաբաթական: Գալոցում չըստ դասակարգը չնշին տղիս է կազմում: Վարչութիւնը այդ ե-րևոյթը բացատրում է նրանով, որ դպրոցը միջոց չունի չըստ դասակարգից շատերին ընդունել ձրի կամ կրթաթոշակ: Այսպէս թէ այնպէս, մեր օրիորդաց դպրոցը համարեալ թէ գոյութիւն չու-նի չըստ դասակարգի համար: Սա շատ տխուր երևոյթ է, մանաւանդ որ չուշեցիները առհասա-րակ շատ են ցանկանում իրանց որդոց ուսում տալ: Տնտեսական հաշուում հոգաբարձութիւնը զանգատում էր, որ հասարակութիւնը չէ ապա-հովում դպրոցը, այնպէս որ վերջինս վաճառ-չարի է կարողանում կառավարել, և եթէ հա-սարակութիւնը չօգնէ դպրոցին, սա անխելութիւն է փակվելու վտանգին... Այս հանգամանքը պա-տու չէ բերում չուշեցիներին. երեք հազար տուն հայ բնակիչ ունեցող Հուշին չէ կա-րողանում պահել իր միակ օրիորդաց դպրոցը... Աշակերտութեան հանդէս դրած ձեռագործները բոլորն էլ վաճառվեցան: Պէտք է նկատել, որ ա-շակերտութեանը «ճաւիղ-պոտի» բաներ շատ էին գործել, ահագին ժամանակ կորցնելով դրանց վրա. եթէ այդ ժամանակը նրանց գործ դնե-կարութեան և այլ իրանց համար օգտակար տեսա-կի ձեռագործի վրա, աւելի ցանկալի կը լի-նէր: Ի վերջոյ չենք կարող չը նկատել հետեւեալը. հանդիսի մասին չէին յայտարարել, ինչպէս լի-նում է սովորաբար, այնպէս որ շատերը չէին խմացել, թէ հանդէսն այդ օրը կատարվելու է: Սրա փոխարէն հարկաւոր էին համարել աղաների դասակարգին առանձին կերպով հրաւիրելու հան-դէսին... Դա պատու չէ բերում դպրոցի վարչու-թեանը»:

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեղ, որ աշքի առջև ունենալով սանիտարական պահանջները, աշխատ տնտաւաճառները Ֆինլան-դիայի մի քանի քաղաքներում այս տարի կայա-նալու չեն:

Մօսկվայում հրատարակվող «Русская Мысль» ամսագրի յուլիսի տետրակում տպված է թիւր-քաց հայերի մասին յօդուածի շարունակութիւնը: Թորոքածը, որը մեծ համակրութեամբ է վերա-բերվում դէպի թիւրքաց հայերի վիճակը, կրում է «Армянский вопросъ въ Турціи» վերնագիրը և ստորագրված է Դ. Դ. Ա. երեք գլխատառերով:

Հրատարակված տեղեկութիւններից երևում է, որ երեսնեան թեմում գալոցները, ինչպէս և միւս թեմերում, պէտք է բացվեն սեպտեմբերի 15-ից: Քանի որ խօշրան այժմ էլ տարածված է երեսնեան թեմում, ուստի՝ խորհուրդ ենք տալիս այդ թեմում աւելի ուշ բանալ դպրոցները, մօտա-կարպէս սեպտեմբերի վերջերին, երբ, յոյս կայ, որ խօշրան բոլորովին կը դադարի:

Արտասահմանի հայոց լրագրներում կարդում ենք. «Ալըղեան պատրիարքը օգոստոսի 19/31 թւով հրատարակած մի կոնդակով կը յանդի-պէր բոլոր հայ եկեղեցիներին մէջ հանդիսաւոր կերպով Մօսկվայի Համդի գահակալութեան տօ-նակներում կատարել»:

Արկիպեան հայոց Բարեգործական ընկերու-թիւնը իր հաշիւով մի սանիտարական խումբ է ուղարկում երեսնի նահանգը՝ խօշրանի դիմա-դրելու համար: Սանիտարական խումբը մէջ կը լի-նեն մի բժիշկ, որը դեռ չէ վարձված, բժիշկ-ուսանող պ. Ա. Հիսանց, դեղինֆէկտոր պ. Ա. Տէր-Գրիգորեան և մի ֆէլդշեր: Ի նկատի ունե-նալով երեսնեան նահանգի մեծութիւնը, որի բոլոր կողմերը մի սանիտարական խումբ հանել չէ կարող, մտադրութիւն կայ երեսնի ձեռնհաս երկրասարդներից կազմել մի կամ մի քանի նոր խմբեր, յանձնելով դրանց դէղիֆէկ-

ցիա անել, սանիտարական մասի վրա հակել և բացատրել ժողովրդին խօշրանի դէմ կռելու եղանակները: Լիպոյս ենք, որ երեսնեան նա-հանգում կը գտնվեն շատ ինտելիգենտ երիտա-սարդ անձինք, որոնք ներշնչված տրէտ ժողովրդին օգնելու զգացմունքով, կը մասնակցեն այս հա-մակերի գործին, որի նախաձեռնող է հանդիսա-նում Բարեգործական ընկերութիւնը:

Մտադրութիւն կայ Հաւարարի ձրի թէյատու-նը փակել սեպտեմբերի 10-ին: Իսկ Հաւարարի ձրի ճաշարանը դեռ մի առ ժամանակ կը շարու-նակի իր գործունէութիւնը:

Թիֆլիսի ոստիկանապետ պ. Մատթիկը պատ-րաստում է ժեռ օհնիսի՝ այն անձանց համար, որոնք աշխատել են ձրի թէյատնութեամբ և ճաշա-րաններում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԵՐ

—Կ. Պօլսի հայոց լրագրները հաղորդում են, որ Մէլիթեղէկ եպիսկոպոս Մարտիրոս մերժել է ընդունելու Բաղրաթիւրի և Բուրճիայի հայոց հո-գեւոր առաջնորդի պաշտօնը:

—Նոր-Ջեղաթիւի վեկնագոն քաղաքի աղգա-յին ժողովը ընդունել է կանոն ընտրողական իրաւունք տալու առաջարկը:

—Լճիցի ուսուցչական դեպարտ. պ. Ստալ, ստա-ցել է վեց շաբաթվա արձակուրդ: Այդ հանգա-մանքի վրա նայում են քաղաքական շրջաննե-րում, որպէս մի ապացոյցի վրա՝ որ Պամիրի հարցի առիթով օչինց դիպլոմատական բարդու-թիւններ ծագելու չեն Անգլիայի և Ռուսաստանի մէջ:

—Նիւ-Եօրկից հեռագրել հաղորդում է, որ հիւսիսային Ամերիկայում ցորենի հոնձը այս տարի 5-ից մինչև 60/0-ով պակաս է անցեալ տա-րիներին:

—Վիեննայի ուսուցչական ընտանութիւնը յանձ-նեց աւտորիական միսիսար կաշիսկին ուսուց-կաւարութեան կողմից մի շրջաբերական հե-ռագիր, որով հերքվում է բաղադրական «Свобода» լրագրում տպագրված ուսուցչական պաշտօնական դո-կումենտների վաւերականութիւնը:

—Հուտով գերմանական Ռեյխստագում կը քննվի նոր օրինագիծ՝ երկրորդ առհասարակ վարակիչ հի-ւանդութիւնների դէմ պաշտպանելու միջոցների մասին:

—Ժընէվից մեղ գրում են. «Եվրոպական կա-ռավարութիւնն էլ սկսել է զգուշութիւնների դի-մել խօշրանի պատճառով. սեպտեմբերի 1-ից (նոր տոմարով) արգելված է արտասահմանից ձկնեղէն, ձկնիկի և դրանց պէս ապրանքների ներմուծելը: Եվրոպայի մասնող ճանապարհորդնե-րը պիտի ենթարկվեն բժշկական հսկողութեան. շուտով բրօշխները պիտի հրատարակվեն՝ նախա-զգուշական միջոցներ ժողովրդին սովորեցնելու համար»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅՑ

ՊՕԻՍՍԱՄ, 1 սեպտեմբերի: Այսօր կայարկին արշիկ ծնեց:

ՊԱՐԻՉ, 1 սեպտեմբերի: Մինիստրների խոր-հուրդը վճառեց, որ սեպտեմբերի 22-ին Պանտե-ոնում տեղի կունենայ մեծ հանդէս, հանրապետու-թեան հարկաւորների աւիթով: Հանդէսին ներ-կայ կը լինեն նախագահ Կարնո և բոլոր պետա-կան հիմնարկութիւնների ներկայացուցիչները:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 2 սեպտեմբերի: Մի քանի նա-հանգներում խօշրանի պակասելու պատճառով՝ ամենօրեայ տեղեկութիւնների փոխարէն կը ստա-ցվեն շաբաթական տեղեկութիւններ: Օգոստոսի 31-ին Պետերբուրգի հիւանդացան խօշրանով 64 հոգի, մեռան 27, առողջացան 78: Ներքին գործերի մինիստրը ժամանակաւորապէս թողնե-լով Պետերբուրգը, յանձնեց մինիստրութեան կա-ռավարութիւնը իր օգնական Պէլլին: Բժշկա-կան դէպքերում չընար, ի նկատի ունենալով որ խօշրան Ռուսաստանում թուլանում է, յայտնում է, որ այլ ևս նոր բժիշկներ ուղարկվելու չեն խօ-շրանով վարակված տեղերը:

ՊԱՐԻՉ, 2 սեպտեմբերի: Յունաց թագաւորը ե-րէկ ուղեւորվեց Վիեննա: Ֆրանսիայի արեւմտեան և արեւմտեան կողմերում կայացած դորախտերի ժա-մանակ ժողովուրդը համակրական ցոյցեր արեց ուսուցչական դոմաւարաններին:

ՋԵՆՈՎԱ, 2 սեպտեմբերի: Թագաւորը և թա-գուհին, պրինցիսներ և մինիստրները հետ՝ ներկայ գտնվեցան պարահանդէսին, որը տրվեց Ֆրան-սիական «Formidable» շոգնաւում: Նախ տախ-տակամբ մի շքեղ այդ էր դարբնած Պարա-հանդէսը շատ ուրախ անցաւ և պարերից յետոյ հիւրերին ընթերցեց արկեց:

